ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ
ՀՐԱՄԱՆ

«17» սեպտեմբեր 2021թ. No 3486 - Ա

ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ «ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱՀՍԿՄԱՆ ԵՎ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ «ՀՄԱ-ԱՊՁԲ-ՀՎԿԱԿ-2021-51» ԾԱԾԿԱԳՐՈՎ ՁԵՌՔ ԲԵՐՎԱԾ ՊԱՏՎԱՍՏՈՒՄԱՅԻՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԽՐԱԽՈՒՍՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ՏՈՄՍԵՐԸ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ «ԱԿԱԴԵՄԻԿՈՍ Ս. ԱՎԴԱԼԲԵԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի թիվ 728-Լ որոշման հավելվածով հաստատված Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության կանոնադրության 18-րդ կետի 20-րդ ենթակետով՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. Առողջապահության նախարարության «Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության (այսուհետ՝ Կազմակերպության) գլխավոր տնօրեն Արտավազդ Վանյանին՝ սահմանված կարգով ապահովել.

1) Կազմակերպության կողմից «ՀՄԱ-ԱՊՁԲ-ՀՎԿԱԿ-2021-51» ծածկագրով ձեռք բերված տոմսերի տրամադրումը Առողջապահության նախարարության «Ակադեմիկոս Ս. Ավդալբեկյանի անվան ազգային ինստիտուտ» փակ բաժնետիրական ընկերությանը և փաստաթղթային ձևակերպումները՝ համաձայն հավելվածի:

2. Առողջապահության նախարարության «Ակադեմիկոս Ս. Ավդալբեկյանի անվան ազգային ինստիտուտ» փակ բաժնետիրական ընկերության տնօրեն Ալեքսանդր Բազարչյանին՝ սահմանված կարգով ապահովել՝

1) Կազմակերպության կողմից «ՀՄԱ-ԱՊՁԲ-ՀՎԿԱԿ-2021-51» ծածկագրով ձեռք բերված տոմսերի ընդունումը և փաստաթղթային ձևակերպումները՝ համաձայն հավելվածի:

2) «ՀՄԱ-ԱՊՁԲ-ՀՎԿԱԿ-2021-51» ծածկագրով ձեռք բերված տոմսերի տրամադրումը «Հյուսիսային պողոտայի» և «Կասկադի» հարակից տարածքներում տեղակայված շարժական պատվաստումային կետերում՝ ոչ աշխատանքային օրերին պատվաստված Հայաստանի Հանրապետության քաղաքացիներին:

3. Առողջապահության նախարարության հասարակայնության հետ կապերի բաժնի պետ Լիլիթ Բաբախանյանին՝ ապահովել.

1) սույն հրամանի տեղադրումը առողջապահության նախարարության պաշտոնական կայքում:

4. Սույն հրամանի կատարման հսկողությունը հանձնարարել Առողջապահության նախարարի առաջին տեղակալ Լենա Նանուշյանին:

Ա. ԱՎԱՆԵՍՅԱՆ

Հավելված

Առողջապահության նախարարի

2021 թվականի սեպտեմբերի 17-ի թիվ 3486 – Ա հրամանի

ՑԱՆԿԸ

ՊԱՏՎԱՍՏՈՒՄԱՅԻՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԽՐԱԽՈՒՍՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ

«ՀՄԱ-ԱՊՁԲ-ՀՎԿԱԿ-2021-51» ԾԱԾԿԱԳՐՈՎ ՁԵՌՔ ԲԵՐՎԱԾ ՏՈՄՍԵՐԻ

Անվանումը	Ամսաթիվ	Ներկայացումներ	Քանակ (անձ)	Միավորի գինը/ՀՀ դրամ	Ընդհանուր գինը /ՀՀ դրամ
Հ.Ղափլանյանի անվան դրամատիկական թատրոն	25 Սեպտեմբեր	Զավեշտալի կատակերգություն հյուրանոցում	50	1500	75000
	26 Սեպտեմբեր	N 707	10	1500	15000
Երևանի քաղաքի պատմության թանգարան	Անժամկետ		700	500	350000